

Ս. ՇՏԻԿՅԱՆ

ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ «ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԻ»

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Միքայել Նալբանդյանը XIX դարի մեր գրականության այն մեծություններից է, որի կյանքի և գործի հետ կապված դեռ շատ մանրամասներ առ այսօր մնում են անհայտության քողով ծածկված: Եվ հասկանալի է, որ յուրաքանչյուր նոր պարզաբանում, նրա գրվածքներում առկա թեկուզ և ամենաաննշան փաստի կամ իրադարձության ճշգրտում կարող է միայն օգնել ավելի լավ ըմբռնելու ու ճանաչելու «այդ գերազնվագույն մարդուն» (Գերցեն): Այս տեսակետից անբավ նյութ է տալիս մեզ Նալբանդյանի հանրահայտ «Հիշատակարանը», որը 1858-1860 թթ. «Հյուսիսսփայլի» էջերում հաջորդաբար հրատարակվելուց հետո, հայ բանասիրության այլևայլ ներկայացուցիչների կողմից անընդմեջ քննության և ուշադրության առարկա է հանդիսացել: Այն իր ամբողջական ու ճշգրտված ձևով, համալրված մասնագիտական հմտությամբ կազմված ծանոթագրություններով, ինչպես հայտնի է, ներկայացվել է «Երկերի լիակատար ժողովածվի» առաջին հատորում (Երևան, 1945, էջ 305-488), և այս առիթով չի կարելի հարգանքով չհիշատակել նալբանդյանագետ Նշան Մուրադյանին, որի կատարած դերն այս կապակցությամբ անուրանալի է:

Սակայն Նալբանդյանի «Հիշատակարանում» առկա են որոշ փաստեր, անձանց ու տեղերի անուններ, այլևայլ բնույթի իրադարձություններ, որոնք, ցավոք սրտի, կամ չեն ծանոթագրվել, կամ էլ ծանոթագրվել են անբավարար և, հետևաբար, անհասկանալի են մնում այսօրվա ընթերցողների համար:

Արդ՝ որո՞նք են «Հիշատակարանի» պակասող ծանոթագրությունները և ի՞նչ մանրամասներ են բացահայտվում, երբ լրացնում ենք այն:

1. 307 էջում¹ կարդում ենք. «Նազարյանցը ասել է, թե հայոց լեզուն հառաջանում է սանսկրիտյան լեզվի մի ճյուղից, մինչդեռ Չամչյանը, Ավգերյանը և Ինճիճյանը ապացուցանում են հայոց լեզվի առաջնությունը և Ադամի լեզու լինելը»:

«Բազմավեպի» 1844 թ. № 21-ում, հրատարակված Ղևոնդ Ալիշանի «Հայոց լեզվին հնությունը» հոդվածն սկսվում է այսպես. «Երբ որ մեկը ստույգ գիտե, թե Ադամա դրախտը Հայաստանի մեջն էր... ուրիշ նոր ապացույցներու չկարոտիր որ համոզվի, թե հայոց լեզուն այնչափ հին է, որ Ադամա լեզու կրնա ըսվիլ և թե ուրիշ ամեն լեզուներու սկիզբն ու մայրն է»: Ուշագրավ է նաև հոդվածի ավարտը. «Այս կարծիքս գրով հրատարակողներուն առաջինը եղած է մեր բարեհիշատակ Հ. Միքայել վարդապետը Չամչյան, երկրորդը բարեհիշատակ Հ. Ղուկաս վարդապետը Ինճիճյան և երրորդը բազմարդյուն Հ. Մկրտիչ վարդապետը Ավգերյան»: Նալբանդյանի «Հիշատակարանի» և Ալիշանի այս հոդվածի միջև եղած ընդհանրությունները նկատելի են, իսկ սա էլ նշանակում է, որ իր «Հիշատակարանի» այս հատվածը գրելիս, Նալբանդյանը ձեռքի տակ է ունեցել «Բազմավեպի» վերոհիշյալ 1844 թ. հավաքածուն և հատկապես Ալիշանի «Հայոց լեզվին հնությունը» հոդվածը:

2. 308 էջում Նալբանդյանի գրական-գաղափարական հակառակորդը՝ պարոն Խ.-ն, անդրադառնալով վաճառականությանը, հավելում է. «Ես «Հյուսիսափայլի» երեք համարի մեջ մի հոդված տեսա վաճառականության մասին, թեև չեմ կարդացել, բայց գիտեմ, որ հիմար բան պիտո է լինի»: Ծանոթագրողը չի նշել, որ խոսքը վերաբերում է Ստեփաննոս Նազարյանցի «Թե ինչ է վաճառականության խորհուրդը ընդհանրապես և թե ինչպես է կերպարանագործվել Անգլիայի վաճառական գորությունը» հոդվածին, որն, իրոք, հրատարակվել է «Հյուսիսափայլի» 1858 թ. մարտի ամսատետրում (№ 3): Նալբանդյանն այստեղ կիրառել է իր սիրած հակադրության եղանակը, այսինքն՝ թույլ է տվել, որ իր հակառակորդը, Խ.-ն, վատաբանի հոդվածը, ապա հանդես է եկել թե՛ հոդվածի և թե՛ այնտեղ արծարծված եվրոպական գիտական վաճառականության մի

¹ Այստեղ և հետագայում էջերը նշված են ըստ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Ե., 1945 թ. հրատարակության: Անհրաժեշտության դեպքում ձեռքի տակ ենք ունեցել «Հյուսիսափայլի» այն համարները, որտեղ տպագրվել է «Հիշատակարանի» մեզ հետաքրքրող հատվածը:

քանի եղանակները հայկական իրականության պայմաններում ծավալելու նազարյանական տեսության կրթոտ պաշտպանությամբ:

Նույն 308 էջում Խ.-ն շարունակելով իր խոսքը՝ ասում է. «Նախ՝ որ տերության սահմանի ներսումը գործած ապրանքների վերա, Կարոլոս Բոսքոյի ճարտարությամբ երևի մաքսատան կնիքը...»: «Անվանական բառարանում» «Բոսկո Կարոլոս» անվան դիմաց կարդում ենք. «Հավանորեն Նալբանդյանը նկատի ունի Բարտոլոմեո Բոսկոյին, իտալացի նշանավոր ֆոկուսնիկին, որ վաթսունական թվականներին կարող էր եղած լինել նաև ռուսական մայրաքաղաքներում» (էջ 543): Թույլ է տրված փոքրիկ անճշտություն. խոսքը վերաբերում է ոչ թե Բարտոլոմեո Բոսկոյին, այլ նրա որդուն՝ ոչ պակաս նշանավոր ձեռնածու Կարոլոս Բոսկոյին, որը հորից սովորելով այդ արհեստը, է՛լ ավելի զարգացրեց ու կատարելագործեց այն: Սկզբնական շրջանում Կարոլոս Բոսկոն հանդես էր գալիս հոր հետ միասին, իսկ նրա մահվանից հետո (1862) ինքնուրույն համարներով: Նրա ձեռնածուական առավել նշանավոր համարը հետևյալն էր. հասարակության ներկայությամբ փակում էր արկղը, կնքում էր այն մի քանի տեղից, ապա, առանց կնիքները եղծելու արկղից հանում էր միջի պարունակությունը, կամ նորանոր առարկաներ ավելացնում այնտեղ: Այս էլ հենց ակնարկված է Խ.-ի խոսակցության մեջ:

3. 311 էջում, Սերովբե Շահբեգի նամակում նշված է, որ «Մեղու Հայաստանի» լրագիրը հրատարակում է հողվածներ, որոնք «պղծում են Գուտենբերգի գյուտը»: Անշուշտ, պարզ վրիպման հետևանքով «Գուտենբերգ» անունը «Անվանական բառարանում» չի ծանոթագրված:

4. 316 էջում, անդրադառնալով հողվածագիր Սովսես Իսահակյանցին, Նալբանդյանը գրում է, որ նրան հիմնավոր կրթություն է հարկավոր, որովհետև «Ներսիսյան դպրոցի շնորհքով շատ հեռի չէք կարող գնալ»: Էջ 378-ում էլ, անդրադառնալով նույն այս հարցին, անում է հետևյալ հավելումը. «Թիֆլիսի հոգևոր դպրոցը, որ հայտնի է անունովս ՆԵՐՍԻՍՅԱՆ (պտուղ արտասվաց Եփրեմ կաթողիկոսի ի Հաղպատ), չէ կարող երբեք մի ուրախություն գոյացնել իմ մեջ, մինչև դա ... արժանի լինի դպրոց անունը յուր վերա կրելու»: Չի ծանոթագրված, թե ի՛նչ է Ներսիսյան դպրոցը,

ինչո՞ւ է Նալբանդյանը նրա ստեղծման գաղափարը կապում Եփրեմ կաթողիկոսի անվան հետ, ինչո՞ւ էր վերջինս գտնվում Հաղպատում, կաթողիկոսանիստ Էջմիածնի փոխարեն, և ինչո՞ւ Կոմս Էմմանուելը այդքան բացասական կարծիք ունի Ներսիսյան դպրոցի մասին: Իսկ «Անվանական բառարանում», «Եփրեմ Ձորագեղցի» և «Ներսես Աշտարակեցի» անունների դիմաց բավական ընդարձակորեն տալով նրանց գործունեության բնութագրությունը (էջ 544, 547), դարձյալ ոչ մի խոսք չի ասված այս հարցերի մասին:

1810 թ. նոյեմբերին Եփրեմ Ձորագեղցին օծվեց ամենայն հայոց կաթողիկոս և ի թիվս բազում այլ հարցերի՝ որոշեց Էջմիածնում եվրոպական տիպի դպրոց ունենալ: Այդ բանն անելը համեմատաբար հեշտ էր, որովհետև եռանդուն և գործունյա Ներսես եպիսկոպոս Աշտարակեցին Էջմիածնում արդեն բացել էր փոքրիկ մի դպրոց, մոտ հիսուն աշակերտների համար, այնպես որ՝ ստեղծվելիք ուսումնական հաստատության հիմքն արդեն կար: Հնարավոր է, որ կաթողիկոսը կարողանար իրականություն դարձնել իր մտադրությունը, սակայն երկրի անապահով վիճակը և վերջապես, ռուս-պարսկական երկու (1804-1813 և 1826-1828 թթ.) և ռուս-թուրքական երկու (1806-1812 և 1828-1829 թթ.) պատերազմները, որոնք գերազանցապես մղվում էին հայկական հողում, ի չիք դարձրեցին Եփրեմի ցանկությունը: Պատերազմական իրավիճակն իր հետ բերեց նաև իր դիվանագիտությունը, որի ասպարեզում Եփրեմն առանձնապես թույլ էր: Ի վերջո, չկարողանալով ճիշտ կողմնորոշվել դարասկզբի ռուս-թուրք-հայ-պարսկական հարաբերությունների մեջ, նա առանց լուրջ պատճառաբանության թողեց Էջմիածինը և 1822 թ. աշնանը անցավ Հաղպատ, որտեղ մնաց մինչև 1826 թ. ամառը: Այս կամավոր արքայություն էլ Եփրեմ կաթողիկոսը շարունակում էր փայփայել եվրոպական տիպի դպրոց ունենալու իր հին գաղափարը և տեսնելով այն վիթխարի դրական գործը, որն անում էր 1814 թվականից Վրաստանի թեմի առաջնորդ ընտրված Ներսես Աշտարակեցին, նրան էլ հորդորում է Թիֆլիս քաղաքում դպրոց բանալ: Այս գաղափարը սիրելի էր նաև Ներսեսին, որը դպրոց ստեղծելու փորձ, ինչպես տեսանք, արդեն ուներ և նա անհապաղ գործի անցավ: Հետևանքն այն եղավ, որ 1824 թ. վերջերին պաշտոնապես իր գոյությունն սկսեց «Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցը»:

Ըստ ամենայնի լավ սկսելով իր գործունեությունը, Ներսիսյան դպրոցը, սակայն, ներքին սուր գծությունների, ուսուցչական բարձրորակ ուժերի պակասության, ֆինանսական ճգնաժամի և մի քանի այլ պատճառներով, 50-ական թթ. խիստ աննախանձելի վիճակի մեջ ընկավ: Եվ մանավանդ այն բանից հետո, երբ Ներսեսը 1852 թ. տեսչի պաշտոնից ազատեց իր հնամենի հակառակորդին՝ Գաբրիել Պատկանյանին, – մեկը, որը ոչ միայն ժամանակի լուսավոր մարդկանցից էր, այլև դպրոցի բանիմաց ուսուցիչներից, – իսկ 1857 թ. սկզբներին վախճանվեց և ինքը՝ դպրոցին հսկող ու հետևող Ներսես Աշտարակեցի կաթողիկոսը, կրթական այդ հաստատության վիճակը առավել քան վատթարացավ: Այս է Նալբանդյանի «Հիշատակարանի» վերոհիշյալ հատվածների գրության ենթատեքստը:

5. 317-318 էջերում Նալբանդյանը խոսում է Մովսես Խորենացու, նրա կատարած գրա-պատմական մեծ դերի մասին, բնութագրում է հռչակավոր «Ողբը» և ավարտում է իր միտքը հետևյալ ձևով. «Հայոց արեղայքը ... մահից զկնի չեն հաշտվում այն պատկառելի ծերունու հետ, սեղանապիղծ ձեռքով մոտենում են նորա խնկելի ոսկորներին, և հանելով գերեզմանից թափում են ջրի մեջ»: Ոչ մի խոսք չի ասված ոչ Խորենացու, ոչ նրա «Հայոց պատմություն» գրքի և ոչ էլ այդ պատմության յուրատեսակ վերջաբանը կազմող «Ողբի» մասին, որն անկասկած կօգներ ավելի ճիշտ հասկանալու «Հիշատակարանի» նշված հատվածը: Գալով Խորենացու ոսկորները հանելու և գետը թափելու մասին ասվածին, Նալբանդյանը կրկնել է իր ժամանակ շատ տարածված այն տեսակետը, որի ակունքը Փարպեցու «Թղթում» արված կարճառոտ մի պատումն է ոմն Մովսես փիլիսոփոսի մասին, որի «ոսկորները (կատաղած հոգևորականները – Ս.Շ.) գերեզմանից հանել էին տալիս և գետը թափում»: Հայ և օտարազգի բանասերներից մի քանիսը սույն Մովսես փիլիսոփոսին նույնացել են մեր Պատմահոր հետ և հանգել այն եզրակացության, որ այդ ամենը տեղի է ունեցել նրա հետ: Սակայն սկսած 1890-ական թվականներից, Միաբանի (Գալուստ Տեր-Մկրտչյան) և Նորայր Բուզանդացու հողվածներում աստիճանաբար հերքվեց այդ տեսակետը, իսկ Ստ. Մալխասյանցը որոշակիորեն հանգեց այն եզրակացության, որ «բացեիբաց պետք է հրաժարվել այն

սխալ ենթադրությունից, թե ոսկորները գերեզմանից հանելու տեղեկությունը Խորենացուն է վերաբերում»²:

6. Էջ 318-ում վաճառականը, խոսելով «Շանթապահ գործիքի մասին» հավելում է, որ «այն հնարել է Բենիամին Ֆրանկլինը»: Վերջինիս ով լինելու մասին ծանոթագրություն տալն անհրաժեշտ էր, որովհետև, մանավանդ մինչև 1860-ական թթ. Ֆրանկլինը հայկական իրականության մեջ գերազանցապես ներկայացվում էր որպես սրբակենցաղ Բարոյախոս³, որպես աստվածահաճո վարք ու բարքի ջատագով⁴, որպես արդար ձևով հարստանալու և այդ հարստությունը հոգեշահ գործերի վրա ներդնելու գաղափարախոս⁵ և այլն: Մ. Նալբանդյանը թերևս առաջինն էր, որն իր «Հիշատակարանում» խոսեց Բենիամին Ֆրանկլին – ականավոր բնախույզ գիտնականի մասին և «Հյուսիսափայլ» ամսագրի միջոցով ցույց տվեց նրա կատարած մեծ գյուտի արժեքն ու նշանակությունը:

7. 327 էջում, Սերովբե Շահբեգի նամակում կարդում ենք. «Ուղարկում եմ ... «Նոր քնար Հայաստանի» անունով չորրորդ տետրակը (տպած Մոսկվա, 1858 թ.): Նույն այս գրքի մասին Շահբեգը հիշատակում է նաև իր նախորդ նամակում, գրելով. «Այս բոլորիս ձեռքս հասավ Մոսկվայում տպած «Նոր քնար Հայաստանի» անունով տետրակի չորրորդ համարը» (էջ 312): Ծանոթագրության մեջ (էջ 530) հերթականությամբ զետեղված են Ոսկան Հովհաննիսյանցի կազմած «Նոր քնար Հայաստանի»-ի բոլոր տետրակները, որի չորրորդ թվահամարի տակ կարդում ենք. «Զանազան երգք պ. Պետրոսի Տեր-Հովսեփյան Մաղաթյանց Շամախեցվո, Սեյադ մականվանելո, հոգուտ ազգի ի լույս ընծայեաց Ոսկան Տ. Գևորգյան Հովհաննիսյանց Երևանեցի» (Մոսկվա, 1857 թ.): Շահբեգի հիշատակած գրքի հրատարակության (Մոսկվա, 1858 թ.) և ծանոթագրության մեջ բերված գրքի լույս աշխարհ գալու (Մոսկվա, 1857 թ.) թվականների տարբերությունը

² Մովսես Խորենացի, Հայոց պատմություն (թարգմանությունը, ներածություն և ծանոթագրություններ Ստ. Մալխասյանցի), Եր. 1940, էջ XXIII:

³ «Բենիամին Ֆրանկլինի խրատք առ պատանիս» («Շտեմարան», 1822, № 17), «Բանիամին Ֆրանկլինի խրատները» («Բազմավեպ», 1844, № 24):

⁴ «Ֆրանկլինի բարոյական առաձները» («Բազմավեպ», 1845, № 11), «Ֆրանկլին Բ. Արվեստ առաքինության» («Մեղու», 1856, № 15):

⁵ «Ֆրանկլին Բ. «Ռիքարդոս բարեմիտ կամ փութաջան և իսելացի տնտեսություն»» («Բազմավեպ», 1848, № 13):

արդեն պետք է հուշեր ծանոթագրողին, որ ինչ որ բան այստեղ ճիշտ չէ և սխալվել է ինքը: Իրոք, այդպես էլ կա: Շահբեգի հիշատակած գիրքը հետևյալն է. «Նոր քնար Հայաստանի (ընդհանուր խորագիր) «Երկասիրությունը ազգային երգչաց, ի լույս ընծայաց հոգուս համազգյաց Ոսկան Տ. Գևորգյան Հովհաննիսյանց Երևանեցի» Մոսկվա, 1858 թ., 119 էջ: Ըստ որում Շահբեգի (այսինքն՝ ինչպես հայտնի է Նալբանդյանի) երկու նամակներում արված փոքրիկ ակնարկներից երևում է, որ նա շատ էլ դրական կարծիք չունի ոչ «Նոր քնար Հայաստանի»-ի այս չորրորդ տետրակի, և ոչ էլ, մանավանդ, նրա առաջաբանի մասին: Այս վերաբերմունքը հասկանալի կդառնա, եթե բերենք թեկուզ հետևյալ երկու քաղվածքները: Խոսելով ազգային դաստիարակության մասին, առաջաբանի հեղինակ Ոսկան Հովհաննիսյանը գրում է. «Ազգ մի, որ դեռևս այբուբեն չգիտե, կարոտություն չունի բնավին Կիկերոնի, Պլատոնի, Թադեսի, Պլինիոսի և սոցա նմանյաց խորիմաստ և խրթնաբան ճառերին, որպես և Պրովետեստի և Պյութագորոսի և Արիստոտելի և սոցին նմանյաց փիլիսոփայությանցն, որ վերջին բանք են, այլ ոչ սկզբնական պիտույք»⁶: Իսկ հասարակ ժողովրդի համար ընթերցանության գրքերի սակավությունը նշելիս հավելում է. «Ասածս հավատո վերաբերյալ գրքերին չի ակնարկիլ, եթե ոչ, անիրավություն կլիներ քողապատել այն արեգակնափայլ լույսն, գոր տարածում է *յուր քրիստոնեական հրահանգներովն* Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի և շատ տեղյաց մատղաշ երեխայից սրաթռիչ մտաց վերա Զմյուռնիացի արժանընտիր մագիստրոսն աստվածաբանության Մսեր Գրիգորյան Մսերյանց անուն»⁷: Որ Նալբանդյանը տրամազծորեն հակառակ վերաբերմունքն ուներ վերոհիշյալ մեջբերումներում արժարժված ազգային դաստիարակության, կամ մանավանդ, Մսեր Մսերյանին տրված գնահատականի վերաբերյալ, դա վիճարկման երթակա չէ: Եվ չնայած այն բանին, որ «Նոր քնար Հայաստանի»-ի չորրորդ տետրակում զետեղված են նաև Ալիշանի հանրահայտ «Երգք Նահապետի» շարքի գործերից երկուսը, որոնց նկատմամբ նրա դրական կարծիքը հանրահայտ է, բայց ամբողջ տետրակի գաղափարական ներքին միտվածությունը բնութագրվում է այն ոճով ու ոգով, որով տոգորված են վերևի

⁶ «Նոր քնար Հայաստանի», տետրակ չորրորդ, Մոսկվա, 1858, էջ 1:

⁷ Նույն տեղում, էջ 71: Ընդգծումը մերը չէ:

մեջբերումները: Այստեղից էլ՝ արդեն հասկանալի է դառնում, թե ինչն է Նալբանդյան-Շահբեգի բացասական վերաբերմունքը ծնող հիմնական շարժառիթը:

8. 331 էջում, խոսելով Բեգզադեի հետ, կոմս Էմմանուելը նրան է դիմում հետևյալ հորդորով. «Քեզ մի բարի խորհուրդ տամ, մեր գեղի մեջ (իմա. Նոր-Նախիջևանում – Ս.Շ.) չկա աղջիկների ուսումնարան, դու այդ քո ավելորդ արծաթը գործի դիր, գոնե առ ժամս մի փոքրիկ ուսումնարան բաց, ուր թող ուսանին աղջիկ զավակները մեր ազգի, կրթված և դաստիարակված մայր դառնալու համար ապագայումը»: Այստեղ անհրաժեշտ էր ծանոթագրել, որ չնայած իր բազում գործերին ու անհանգիստ կյանքին, Նալբանդյանը, 1860-ական թվականներից սկսած, մեծապես տարված էր իր հայրենիքում իգական դպրոց բանալու հոգսերով: Այդ գաղափարը նա պաշտպանում ու խրախուսում էր անգամ Հնդկաստանում եղած ժամանակ, 1861 թ. (Տե՛ս Նալբանդյանի նամակը Ա. Սուլթանշահին, ԵԼԺ, հատ. 4, էջ 109), իսկ այդ գաղափարը իր կոնկրետ դրսևորումն ստացավ նույն թվականի աշնանը: 1861 թ. սեպտեմբերի 8-ին, Նոր-Նախիջևանում, քաղաքագլուխ Կարապետ Հայրապետյանցի բացման ճառով, իր գոյությունն է սկսում Նոր-Նախիջևանի «Ազգային օրիորդաց ուսումնարանը». ժամանակի համար խիստ կարևոր մի իրադարձություն, որի շնորհիվ «քաղաքիս երկուս բաժանյալ հասարակությունը միավորվեց սիրով և միաբանությամբ, նպատակ ունենալով ազգային օգուտը»⁸:

9. 333 էջում Բեգզադեն հետևյալ մեղադրական խոսքն է ուղղում Կոմս Էմմանուելի և նրա կողմնակիցների հասցեին. «Դուք բոլորովին դարձել եք լոթեռ ասեմ, ֆարմասոն ասեմ, Չիք հարություն դավանող ասեմ, աստված ազատե»: Փոքր ինչ անց, 334 էջում Բեգզադեն կրկնում է իր մեղադրանքը, թե Կոմս Էմմանուելն ու նրա կողմնակիցները դարձել են «Հերետիկոս, հերձվածող, անաստված... Չիք հարություն դավանող»: «Լոթեռի» և «ֆարմասոնի» մասին դեռ խոսք կլինի: Գալով գիտափիլիսոփայական այն ուղղությանը, որը ձևավորվեց Եվրոպայում XIX դարի սկզբներից և որը ժխտում էր Քրիստոսի հարության՝ Աստվածաշնչում շարադրված հայտնի պատմությունը (այստեղից էլ հայերեն անվանումը՝ «Չի՛ք հարություն»), մի ուղղություն,

⁸ «Արշալույս արարատյան», 1861, № 664 («Ճառ ասացյալ ի հանդիսի բացման ազգային ուսումնարանի...»):

որին, ինչպես նկատում ենք, համակրում էր նաև Նալբանդյանը, ապա այդ մասին անհրաժեշտ էր տալ հետևյալ ծանոթագրությունը:

Երբ XVIII դարում իր առավել դրսևորմանը հասած ռացիոնալ մտածողությունը սկսեց քննության բովով անցկացնել նաև Աստվածաշունչը, ապա, ի թիվս այլ դրվագների, աստիճանաբար սկսեց հերքվել նաև Քրիստոսի հարության պատմությունը: Սկզբում առաջ քաշվեց այն տեսակետը, որ հարություն ընդհանրապես չի եղել, և որ Քրիստոսի աշակերտները պարզապես գողացել են իրենց մահացած ուսուցչի դիակը, նրան խորհրդավորության լուսապսակով ծածկելու և աստծո որդի լինելը հավաստելու համար: Սրան հաջորդեց գերմանացի աստվածաբան-փիլիսոփա Ֆրիդրիխ Շլեյխերմախերի (1768-1834) և Հենրիխ Պաուլուսի (1761-1851) տեսությունը Քրիստոսի լեթարգիական քնի մասին: Սրանք ապացուցում էին, որ Քրիստոսը խաչված ժամանակ չէր մահացել, ինչպես այդ պատգամում էր Աստվածաշունչը, այլ պարզապես ընկել էր լեթարգիական թմրության մեջ: Հետագայում, խաչից իջեցնելու ժամանակ ցուցաբերած հոգատարության, քարե սառը դագաղում գտնվելու, քարանձավի խոնավ միջավայրում լինելու հետևանքով նա կրկին ուշքի էր եկել և իր աշակերտների օգնությամբ դուրս էր եկել գերեզմանից: Արդեն Նալբանդյանի ժամանակներում, 1850-ական թթ. մեծ տարածում ստացավ Դավիթ Շտրաուսի (1808-1874) տեսությունը, ըստ որի՝ Քրիստոսի թաղվելուց հետո հարություն ընդհանրապես չի եղել, քանզի նա սովորական մահկանացու էր, և հանգուցյալը մնացել էր իր քարեղեն դագաղում. հարության մասին եղած ամբողջ պատմությունը ավելացվել է հետագայում, նրա աշակերտների կողմից: Ինչպես տեսնում ենք, առաջադիմաբար տրամադրված ժամանակի քննադատական միտքը ոչ առանց հիմնավոր փաստարկների, հերքում էր Քրիստոսի հարության աստվածաշնչային ուսմունքը, և Նալբանդյանը որոշակիորեն հարում էր այդ կարծիքին:

10. 333-334 էջերում Կոմս Էմմանուելն ու Բեզզադեն եռանդուն կերպով բանավիճում են՝ անընդհատ վկայակոչելով Էֆիմերդեն: Կոմս Էմմանուելն անվերապահորեն բացասաբար է արտահայտվում նրա մասին, իսկ Բեզզադեն՝ ընդհակառակը: Գեթ մի քանի տողի սահմաններում պետք էր նշել, որ դեռ Ալեքսանդր Մակեդոնացու և Հուլիոս Կեսարի ժամանակների ռազմական իրադարձություններն

արձանագրող այս օրագիրը (այստեղից էլ անունը «Էֆիմերիս», որ հունարեն նշանակում է «օրագրություն») հետագայում հավելվեց զանազան տոմարագիտական, բժշկական, աստղաբաշխական, ազգագրական բնույթի տեղեկություններով և շուրջ XIII դարում թափանցեց Հայաստան, որպես բախտագուշական ժողովածու «Էֆիմերդիե» (ժողովրդական ձևը՝ «Էֆեմերդի», «Եփրեմվերդի») անվամբ (առաջին հրատարակությունը՝ Վենետիկ, 1748 թ.): XVIII և հատկապես XIX դարերում Էֆիմերդեն կորցրեց իր գիտա-պատմական հեղինակությունը և դարձավ այլևայլ գրքացների, հեքիմների ու հմայաբույժների համար ձեռնարկ: Այս ծանոթագրության հետևանքով հասկանալի կդառնար, թե ինչու Նալբանդյանը բացասաբար պետք է արտահայտվեր Էֆիմերդեյի մասին, իսկ նրա հետադեմ գրուցակիցը՝ Բեզգադեն, նույնիսկ սրբություն պետք է համարեր այն:

11. 334 էջում Կոմս Էմմանուելը բանավիճելով Բեզգադեյի հետ՝ ասում է. «Ա՞յդ էր պատճառը, որ ձեր պես իսելոքների բերանով անվանվում էինք լոթեռ և ֆարմասոն, գիտե՞ս դու, թե ինչ ասել է լոթեռ կամ ֆարմասոն»: Նշան Մուրադյանը վերջին երկու բառերի առիթով տվել է հետևյալ ծանոթագրությունը. «Լոթեռ – լութերական բառի ժողովրդական աղճատված ձևը» և «Ֆարմասոն – ֆրանկմասոն բառի աղճատված ձևը. մասոնականության հետևող» (էջ 531, ծան. № 21, 22): Նախ՝ այս մասին «Հիշատակարանում» առաջին անգամ հանդիպում ենք 333 էջում, և ուրեմն, համապատասխան ծանոթագրությունները պետք է որ տրված լինեին այդտեղ: Եվ երկրորդ, ինչպես դժվար չէ նկատել, ծանոթագրությունները պարզապես ոչինչ չեն բացատրում հիշյալ երկու կրոնա-քաղաքական ուղղությունների մասին, և առավել ևս չեն բացատրում, թե ինչու Նալբանդյանը ընդհանուր առմամբ համակրանք էր դրսևորում թե՛ լութերականության, և թե՛ մասոնիզմի նկատմամբ: Այնինչ, լութերականության մասին անհրաժեշտ էր նշել, որ հայկական իրականություն թափանցելով 1800-ական թվականներից, այն գտնում էր, որ հայկական հնադարյան եկեղեցին ունի ծեսեր ու եկեղեցական սովորություններ, որոնք հետ են մնացել ժամանակի պահանջներից և հետևաբար արգելակում են նրան ավելի մոտիկից շփվել ժողովրդի հետ: Այստեղից էլ առաջ էր քաշվում հայկական եկեղեցին որոշ բարեփոխումների ենթարկելու պահանջը.

մի պահանջ, որի ջատագովներից էին թե՛ Նազարյանցը, և թե՛ Նալբանդյանը (հիշենք Նալբանդյանի հայտնի արտահայտությունը. «Այո, մենք եկեղեցական բեֆորմի կոչ ենք անում»), և որը փոթորիկ հանեց կղերա-պահպանողականության ամբողջ բանակում: Գալով մասունիզմին, ապա պետք էր նշել, որ դեռ XVII դարում ձևավորվելով որպես քարագործ բանվորների կամ աղյուսագործների կամավոր ընկերություն (այստեղից էլ անվանումը՝ «Ֆրամասոն», որ նշանակում է «ազատ աղյուսագործներ». հայկական իրականության մեջ երբեմն թարգմանվել է «ազատ որմնադրականներ» կամ «որմնադրականներ» ձևով), այն շուտով տարածվեց ամբողջ աշխարհում, իսկ 1800-ական թթ. թափանցեց նաև Պոլսի և Զմյուռնիայի հայության մեջ: Ընկերության այս բնույթն էր ասիա, որ համակրանք էր առաջացրել Նալբանդյանի մոտ, իսկ մի տարի հետո, արդեն Պոլսում եղած ժամանակ, նա պետք է հիմնավորապես ծանոթանար հայ ֆրամասոնների հետ, հավանորեն Հարություն Սըվաճյանի միջոցով, որովհետև վերջինս Պոլսի հայ մասունական կազմակերպության նշանավոր անդամներից էր: Այդ ծանոթության հետևանքով՝ է՛լ ավելի խորացավ Նալբանդյանի համակրանքը մասունիզմի նկատմամբ, և այդ էր պատճառը, որ իր «Հիշատակարանի» ինչպես այս հատվածում, այնպես էլ հետագայում, նա դրվատանքով էր արտահայտվում այդ ընկերության մասին:

12. 353 էջում խոսելով Նոր-Նախիջևանի ծայրամասում գտնվող Սուրբ Խաչ եկեղեցու մասին, Նալբանդյանը հավելում է, որ Հովսեփ Արղությանն այդտեղ «Հաստատած է երբեմն ուսումնարան և տպարան...: Թե որքան ժամանակ հարատևել է այդ դպրոցը, չը կա այդ մասին մի գրավոր հիշատակարան. միայն այսքան հայտնի է, որ աշակերտներից ոչ մինը մի բան ուսած չեն այդ տեղ»: Սուրբ Խաչ եկեղեցուն կից եղած դպրոցի վերաբերյալ անհրաժեշտ էր տալ հետևյալ ծանոթագրությունը: 1781 թ. իշխան Գրիգորի Ալեքսանդրովիչ Պոտյոմկինը (1739-1791 թթ.) արքունիքին ներկայացրած իր զեկուցագրում նշում է, որ ունենալով Հովսեփ Արղությանի և Հովհաննես Լազարյանի աջակցությունն ու խրախուսանքը, կարգադրել է Նոր-Նախիջևանի հայության համար կրթական և հոգևոր հաստատությունների շինարարություն սկսել: 1783 թ. ապրիլին Արղությանն ուրախությամբ տեղեկացնում է, որ Նոր-Նախիջևանում արդեն սկսել է դպրոցի շինարարությունը, որը սովորող աշակերտների համար պետք է ունենա և

«գտուն բնակութեան» և որ մեկ ուսուցիչ-քահանա էլ արդեն վարձել է Թիֆլիսից: Եվ չնայած այն բանին, որ դպրոցի վերջնական ավարտն ու բացումը փոքր ինչ ձգձգվում է, որովհետև գրեթե միաժամանակ կառուցվում էր նաև Սուրբ Խաչ եկեղեցին, այնուամենայնիվ, 1780-ական թթ. վերջերին, ունենալով քառասուն աշակերտ և Թադևոս վարդապետի նման գործունյա ու եռանդուն վերահսկիչ, Նոր-Նախիջևանի Սուրբ Խաչի դպրոցը սկսում է իր գործունեությունը: Կամաց-կամաց կրթական այս հիմնարկը մեծ անուն ու հեղինակություն է ձեռք բերում և այնքան, որ 1791 թ. Արդությանը ռուս-թուրքական պատերազմի հետևանքով որք ու անխնամ մնացած երեսուն երեխաների (և ոչ թե «մոտ իբրև վաթսուն տղա» ինչպես նշում է Նալբանդյանը) հավաքում-ուղարկում է այս դպրոցը թե՛ սովորելու և թե՛ ապրելու համար: Նոր-Նախիջևանի Սուրբ Խաչի դպրոցը իր գոյությունը դադարեցրել է հավանորեն դարավերջին: Թվում է, որ այս բնույթի փոքրիկ ծանոթագրությունը կօգներ ավելի ճիշտ հասկանալու Նալբանդյանի «Հիշատակարանի» վերոհիշյալ հատվածը:

13. Նույն 353 էջում, խոսելով «Սուրբ Խաչի դպրոցում» հաստատված տպարանի մասին, Նալբանդյանը հիշատակում է նրա մի քանի հրատարակությունները, համապատասխան բնութագրականներ տալով նրանց: Ծանոթագրության մեջ այս առիթով ասվում է, որ «Տպարանում հրատարակված է տասներկու անուն գիրք: Ահա՛ լրիվ ցուցակը» (էջ 533): Նախ նշենք, որ հանձնարարված «Ահա՛ լրիվ ցուցակը» բավականաչափ թերի է, որովհետև հիշյալ տպարանը իր գոյության ընթացքում հրատարակել է քսան անուն գիրք⁹, ըստ որում նրանցից մեկը՝ Ա. Ջուղայեցու «Գրքոյկ որ կոչի Աղօթամատոյց»-ը (Նոր-Նախիջևան, 1790), նույն թվականին ունեցել է իր երկրորդ վերահրատարակությունը, և ապա՝ անգամ իր նշած գրքերն էլ ծանոթագրողը բերել է անստույգ վերնագրերով և չգիտես ինչու չշեշտելով նրանց հրատարակության թվականները: Առհասարակ Նոր-Նախիջևանի հայկական գաղութի գրական-հասարակական կյանքի ու նրա պատմական անցյալի մասին Նալբանդյանի «Հիշատակարանում» հաղորդված տեղեկությունները կարիք ունեն մեկից ավելի մասնագիտական ծանոթագրությունների և այս կապակցությամբ ուշադրություն ենք

⁹ Վ.Բ. Բարխուդարյան, Նոր-Նախիջևանի հայկական գաղութի պատմություն, Եր., 1967, էջ 433:

հրավիրում Վ.Բ. Բարխուդարյանի «Նոր-Նախիջևանի հայկական գաղութի պատմություն» աշխատության վրա:

14. 360 էջում, Նալբանդյանն ուրախությամբ արձանագրում է, որ Պոլսի հայոց շրջանում ուսման գործն արդեն կարգի է ընկնում, «Չնայելով, որ մի կողմից, Խաթթի-Հյումայունի դուրս գալուց հետո, Տաճկաստանի լուծը ծանրացած էր նորա քրիստոնյա հպատակների վերա»: Այս կապակցությամբ անհրաժեշտ էր նշել հետևյալը: 1856 թ. փետրվարի 18-ին, սուլթան Աբդուլ-Մեջիդը հրապարակեց Օսմանյան կայսրության մեջ արմատական բարեփոխումներ մտցնելու իր հրովարտակը, որն ուներ «Խաթթի-Հյումայուն» անվանումը (իմա՛. թագավորական ուղերձ): Հրովարտակը մեծամեծ խոստումներ էր տալիս քրիստոնյա հպատակներին, հոչակելով բոլոր ազգությունների և բոլոր հավատների հավասարություն, հարկերի վճարման հարցում նախկին խտրականության վերացում, զինվորական և պետական ծառայության մեջ քրիստոնյաներին՝ բարձր աստիճանների հասնելու անկապտելի իրավունք և այլն: Սակայն «Խաթթի-Հյումայունը» ոչ միայն աստիճանաբար վերածվեց դատարկ թղթի մի կտորի, այլև Թուրքիայի մահմեդական հասարակությունն ու ղեկավարությունը, հրովարտակը նկատելով որպես իր իրավունքները սահմանափակող և կայսրության մեջ իրեն մենաշնորհային վիճակից զրկող մի իրողություն, է՛լ ավելի ուժեղացրին հալածանքներն ու ճնշումները ոչ մուսուլման ազգերի նկատմամբ: Նալբանդյանի «Հիշատակարանի» վերոհիշյալ տողերը, ինչպես հայտնի է, գրվել են 1858 թ., այսինքն՝ «Խաթթի-Հյումայունի» հրատարակվելուց երկու տարի հետո: Եվ չնայած այն բանին, որ նույնիսկ 70-ական թթ. հայկական պարբերականները փառք ու օվսաննա էին երգում «Խաթթի-Հյումայունին», ընդամենը երկու տարվա ժամանակահատվածը բավական եղավ Նալբանդյանի համար, որ վերջինս, իրեն հատուկ հեռատեսությամբ, կռահի նրա մեռելաձիհն լինելը:

15. 361 էջում, խոսելով Հայաստանում եվրոպական տիպի դպրոցների անհրաժեշտության մասին, Նալբանդյանը հավելում է «Ազգային ուսումնարան ասելով, չեմ հասկանում այնպիսի ուսումնարանք, որոնց մասին հրատարակում էր «Մեղուն» ուրախացած. այդպիսի բաները արժանի չեն և ուսումնարան անունը յուրյանց վերա

կրելու: Օբսկուրանտների (խավարապաշտների) կարծիքով արդեն մի մեծ բան էր, եթե մի աբեղա կամ մի եպիսկոպոս, մի տիրացու նշանակում էր մի գյուղում վարժապետ, և հավաքվում էր նորա մոտ մի քանի աշակերտք... Ազգի համար եղած թե չեղած այդպիսի չնչին բաներ միևնույն են»: Ստույգ գիտենք, որ Նալբանդյանի «Հիշատակարանի» այս հատվածը գրվել է 1858 թ. հունիսի 27-ին: Ուստի հասկանալի է, որ նա ակնարկում է գյուղում դպրոց բանալու վերաբերյալ այն հիշատակությունները, որոնք կարող էին տեղ գտած լինել Թիֆլիսի «Մեղու Հայաստանի» լրագրում, մինչև այդ թվականը, «Մեղու Հայաստանի», որն, ինչպես հայտնի է, սկսել է հրատարակվել 1858 թ. հունվարից: Այս բնույթի երկու հաղորդագրություն կա: Առաջինն այն մասին է, որ սրբազան Սարգիս Ջալալյանցը, այցելելով Սանահինի վանք, տեսավ, որ «հայ բնակչաց որդիքն չունենալով ուսումնարան, պարապում են երկրագործութենով, այգեգործութենով, շատերն էլ ոչխար և տավար արածացնելով, շինեց նույն վանքին պարսպումը մեկ քանի սենյակ և ժողովեց մանկունք զանազան գեղերեն, որք ուսանելով հայերեն և ռուսերեն լեզու, պիտանի լինին ժամանակին ազգին և եկեղեցուն»¹⁰: Ինչպես նկատում ենք, Սարգիս Ջալալյանին է վերաբերում Նալբանդյանի ակնարկը «մի եպիսկոպոսի» մասին, որը գյուղում ուսումնարան է հիմնել, և այստեղից էլ բացահայտվում է այն թշնամության պատճառներից մեկը ևս, որը գոյություն ունի Նալբանդյանի և Ջալալյանի միջև:

Երկրորդ հաղորդագրությունը «Մեղու Հայաստանին» տպագրել է 1858 թ. մայիսի 31-ին, և վերաբերում է Ղզլար քաղաքում «պողպոլկովնիկ» Հարություն Քանանյանցի նախաձեռնությամբ բացված դպրոցին, որի «վարժապետքն են դպիր Սահակ Պապովյանց և Մովսես Իսահակյանց, որք ուսուցանեն հայերեն և ռուսերեն լեզուք»: Սրանց էլ հենց վերաբերում է Նալբանդյանի ակնարկը մի աբեղայի ու մի տիրացուի մասին, որոնք զուրկ են անհրաժեշտ գիտելիքներից: Եվ եթե ավելացնենք, որ Մովսես Իսահակյանցը այն հողվածագիրն էր, որը «Մեղու Հայաստանի» էջերում մեկից ավելի անգամ հանդես եկավ ինչպես Նազարյանցի, այնպես էլ Նալբանդյանի դեմ, ապա հասկանալի կդառնա «Հիշատակարանի» այս հատվածի գրության շարժառիթներից մեկը ևս:

¹⁰ «Մեղու Հայաստանի», 1858, № 15 («Բանասիրականք»)

16. 363 էջից Նալբանդյանն սկսում է իր «Հիշատակարանի» Ջ հատվածը «Օգոստոսի 23» թվականով և սկսում է հետևյալ տողերով. «Ոչինչ արժանի ուշադրության նորությունն չեմ կարող արձանագրել «Հիշատակարանիս» մեջ, որովհետև չկան: Ասացի ԱՐԺԱՆԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ, ապա թե ոչ այնպիսի չնչին գործողությունք, որպիսիք հրատարակվում են ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՂՈՒԻ մեջ, շատ անգամ խելացնոր մարդու արժանի լոգիկայով, ես անարժան եմ համարում ներս բերել Հիշատակարանիս մեջ, որովհետև ավստում եմ ժամանակիս»: Նախորդի նման՝ այս դեպքում էլ հասկանալի է, որ Նալբանդյանն ակնարկում է «Մեղու Հայաստանի» լրագրում տպագրված այն «գործողությունքը», որոնք լույս աշխարհ են եկել 1858 թ. օգոստոսի 23-ից առաջ: Եվ իրոք, 1858 թ. հունիսից «Մեղու Հայաստանին» (№ 24), սկսում է հրատարակել Վահան Արամյանի (իմա՝ Ջարմայր Մսերյան)՝ նամականիի ձևով հողվածաշարը, ուղղված Ստեփաննոս Նազարյանցի գիտական և հրապարակախոսական գործունեության դեմ: Հազիվ մի քանի համար անց, «Մեղու Հայաստանին» հրատարակում է ծավալուն մի հողված «Պարոն Ստեփաննոս Նազարյանցը ու նրա գրավոր վաստակքը» խորագրով, դարձյալ ուղղված Ստեփաննոս Նազարյանցի, նրա աշխատությունների և մանավանդ «Հյուսիսափայլ» ամսագրի դեմ: Եվ եթե ավելացնենք, որ ինչպես լրագրի հրատարակության սկզբից, այնպես էլ մանավանդ հիշյալ ժամանակաշրջանում, խմբագիր Ստեփաննոս քահանա Մանդինյանցը առիթը բաց չէր թողնում իր պարբերականի միջոցով զանազան մեծ ու փոքր «խաճանաքներ» հասցնելու ինչպես Նազարյանցին ու «Հյուսիսափայլին», այնպես էլ նրա անհանգիստ աշխատակցին, ապա հասկանալի կդառնա, որ «Մեղու Հայաստանին» 1858 թ. կեսերից կատարյալ խաչակրաց արշավանք էր սկսել հասարակական-քաղաքական այն հոսանքի դեմ, որն իրեն գլուխ ուներ Նազարյանցին ու Նալբանդյանին: Այս էր, ահա, որ ակնարկում էր Նալբանդյանը վերևում բերված տողերում և, որ պակաս կարևոր չէ, իր «Հիշատակարանի» շարունակության մեջ, հաճախ բառացի վկայակոչումներ անելով «Մեղու Հայաստանի» հիշյալ հողվածներից, բանավիճում է նրանց դեմ, պաշտպանելով Նազարյանցին ու նրա տեսակետները:

17. 363 էջում Նալբանդյանը գրում է, որ կեղծուպատիր գովասանքներ շռայլելը իր գործը չէ և որ այդ անելը նա թողնում է «Սուտ ազգասերների, օբսկուրանտների, եզվիտների և Մաքիավելու հոգով տոգորված մարդերի գործակատարությանը»: 368 էջում էլ անդրադառնալով նույն հարցին, հավելում է. «Ցնծացե՛ք, սուտ ազգասերք, օբսկուրանտներ, եզվիտներ և Մաքիավելու հոգով խմորված պարոններ»: Ծանոթագրության մեջ չի նշված, թե ինչ բան է մաքիավելիականությունը, իսկ հատորի վերջում զետեղված «Անվանական բառարանում» «Մաքիավելի» ընդհանրապես չկա: Այնինչ հարկավոր էր նշել, որ իտալական Վերածննդի ժամանակվա գործիչներից մեկը՝ արձակագիր, բանաստեղծ, դրամատուրգ, հասարակական կյանքի տեսաբան Նիկոլո Մաքիավելին (1469-1527), հիմնադիրն է այն ուսմունքի, որը նա հետևողականորեն զարգացրել է իր «Միապետը» աշխատության մեջ (1513, ռուս. թարգմ. 1869): Հեղինակի ուսմունքը հիմքում ռացիոնալ հատիկ ուներ. նպաստել բաժան-բաժան եղած Իտալիայի միավորմանն ու որպես միասնական պետություն հանդես գալուն: Բայց դրան հասնելու համար նրա առաջարկած միջոցները հեռու էին բարոյական համարվելուց: Մաքիավելին զարգացնում էր այն միտքը, որ երկրի միավորումը կարող է իրականացվել միայն հզոր ու անկախ միապետի միջոցով, իսկ նրա իշխանության հասնելու համար թույլատրելի են բացարձակապես բոլոր միջոցները՝ խաբեությունը, երկերեսանիությունը, քաղաքական շանտաժը, հավատուրացությունը: Միապետը իր իշխանությունը պետք է ամրապնդի ուժով ու զենքով և այդ անելու համար դարձյալ թույլատրելի են բոլոր միջոցները: Ժողովուրդը պետք է միայն կուրորեն հնազանդվի, վախենա իր իշխողից և անմոռնչ կատարի նրա բոլոր ցանկությունները: «Մաքիավելիզմ» արտահայտությունը, որն սկսեց կիրառվել համեմատաբար ուշ շրջանում, նշանակեց երկերեսանիությունը, նպատակին հասնելու համար ոչ մի միջոցի առաջ կանգ չառնելը, բարոյական ու մարդկային ամեն տիպի չափանիշները ոտքի տակ տալը: Հենց այս իմաստով էլ օգտագործել է Մաքիավելու անունը Նալբանդյանը¹¹:

¹¹ Ուշագրավ է, որ այս տեսակետը Նալբանդյանից դեռ չորս տարի առաջ հայտնում էր Կարապետ Ութուջյանը. «Մաքիավել, – գրում էր նա, – քաղաքական ճիզվիտության հայրն էր, Լոյլա՝ կրոնական ճիզվիտության» («Մասիս», 1854, № 114 («Քաղաքական»)):

18. 365 էջում կարդում ենք. «Սուտ ազգասերքը և մյուս նոցա ընկերքը, որոնց անունները մի քանի անգամ կրկնեցի...»: «Հիշատակարանի» նախորդ հատվածներում, այդ գնահատականին արժանացած մարդկանցից, բացի Մովսես Իսահակյանցից, ուրիշ որևէ անվան հիշատակություն, այն էլ մի քանի անգամ, չենք հանդիպում: Եթե մտաբերենք, որ Նալբանդյանը մշտապես տրտնջում էր իր «հորեղբորից», այսինքն՝ Ստեփաննոս Նազարյանցից, որ «Իմ գլխին ցենզորի նման մի բան է», որ «ամենայն օր նայում է «Հիշատակարանիս» և այլն, – ապա կարելի կլինի ենթադրել, որ մինչև վերոհիշյալ պարբերությունը «Հիշատակարանում» եղել է ավել կամ պակաս ծավալուն մի հատված, որտեղ Նալբանդյանը հականե-հանվանե հիշատակել և իհարկե համապատասխանորեն «մշակել» է այդ անձանց, և որը «հորեղբայրը» կամ գուցե նրա ցուցումով ինքը՝ Նալբանդյանը, հանել է «Հիշատակարանից»:

19. 367 էջում Նալբանդյանը հիշատակում է իր, Նազարյանցի և համախոհների աշխատանքի արդյունք հանդիսացող ինքնուրույն և թարգմանական բնույթի ութ անուն գրքեր: Դրանցից վեցերորդի՝ «Պավլոս և Վիրգինիա»-ի վերաբերյալ ծանոթագրության մեջ նշելով, որ հեղինակը Բերնարդեն դը Սեն Պիերն է, իսկ թարգմանիչը՝ Նազարյանցը, ծանոթագրողը հավելում է. «Վեպին կցված է Նազարյանցի «Հնդկական խուղ» ոչ այնքան հայտնի պատմվածքը (էջ 533, ծան. № 39): Մինչդեռ «Հնդկական խուղ» պատմվածքը հանդիսանում է նույն Ժակ-Անրի Բերնարդեն դը Սեն-Պիերի գրչի արգասիքը, առաջին իսկ հրատարակության ժամանակվանից (Փարիզ, 1834) այդ երկու գործերը հանդես են եկել միասին և Նազարյանցն օգտվել է Փարիզյան հիշյալ հրատարակությունից՝ իր թարգմանությունը կատարելու համար: Ասվածից պարզ է, Նազարյանցը եղել է Բերնարդեն դը Սեն-Պիերի «Հնդկական խուղ» պատմվածքի թարգմանիչը (ֆրանսերենից արևելահայերեն) և ամենևին էլ ոչ հեղինակը: Գալով հիշատակված ութ անուն աշխատություններին, ապա ինչպես վկայում է հենց ինքը՝ Նալբանդյանը, դրանց հիշատակել է «Սուտ ազգասերների սրտի մեծ ցավի համար» (էջ 367), այսինքն՝ ունենալով որոշակի միտում: Այդ միտումը հասկանալի կդառնա, եթե հիշենք, որ հայկական իրականությունը լցված էր բազում այնպիսի գրքերով, որոնք Նալբանդյանը դիպուկ որակել է որպես «աբեղայական գրականություն»: Միայն 1858 թ. ասպարեզ եկան

Գ. Այվազովսկու «Քրիստոնեական վարդապետութիւն ուղղափառ հաւատոյ Հայաստանեայց եկեղեցոյ» (Փարիզ), Ա. Արարատյանի «Դիմագրաւ ընդդէմ սատան յարուցելոյ ամենապատուական լեզուիս հայոց» (Թիֆլիս), նույնի՝ «Միսալանք որ կոչի վարդապետարան կրոնի» (երկուսն էլ գրված են Նազարյանցի և նրա պարբերականի դէմ), Մկրտիչ Գերմանիկեցու «Առաջնորդ սրբազան տեղեաց» (Պոլիս), Ավգուստինոս Հիպոնայի «Առանձնախօսութիւնք և առձեռնականք» (Վենետիկ), Անհայտ հեղինակի «Լուսավորյալներն ու լուսավորությունը» (Պոլիս), Սարգիս Թեոդորյանի «Յաղագս մարդկային իրաւանց եւ պարտուց» (Փարիզ) և այս բնույթի ուրիշ գործեր: Սրանց էր, ահա, Նալբանդյանը հակադրում իրենց հրատարակությունները և հավաստում, որ ոչ միայն «Ճշմարտության քարոզիչքը գործելու են անդադար... այլև նոր նոր գրքեր ևս են դուրս տալու, և այս գործունեությունը մի ժամանակավոր բան չէ» (էջ 368):

20. 369-370 էջերում հրատարակված է Ս. Շահբեգի նամակը, գրված 1858 թ. սեպտեմբերի 18-ին: Այստեղ կարդում ենք. «Մտքո՞ւմդ է այն Լինդման անունով հաստափոր և զվարճախոս բժիշկը... որ անցյալ տարի տեսանք Մարիենբադումը»: Այս փաստը, ինչպես և նրա հաջորդող փոքրիկ հուշապատումը, պետք է որ ունենային հետևյալ ծանոթագրությունը: «Անցյալ տարի», այսինքն՝ 1857 թ. կայացել է Նալբանդյանի առաջին և թերևս «ամենագաղտնի» ճամփորդությունը արտասահման, որը տեղի էր ունեցել «1857 թ, հուլիսի 23-ի և օգոստոսի 28-ի արանքում»¹²: Այս ուղևորության մասին ոչ միայն չափազանց քիչ են համապատասխան տեղեկությունները, այլև թեականորեն են հայտնի անգամ այն քաղաքների անունները, որտեղ եղել է նա: Արդ՝ ինչպես տեսնում ենք, Շահբեգը որոշակիորեն հիշատակում է Ավստրիական ամառանոցային Մարիենբադ քաղաքը, որի ջերմուկները հայտնի էին որպես հողացավի անզուգական բուժիչ, իսկ հայտնի է, որ Նալբանդյանը տառապում էր այդ հիվանդությամբ: Մարիենբադ հասած Նալբանդյանի համար այլևս կասկած չի կարող լինել, որ նա կայցելեր նաև Վենետիկ (Մարիենբադը գտնվում էր Վենետիկից մի քանի հարյուր կիլոմետր հյուսիս) - մի քաղաք, որի անունը նույնպես թեականորեն էր հիշատակվում: Ինչպես տեսնում ենք, Նալբանդյանի առաջին ուղևորության հետ կապված մեկ-երկու

¹² Աջ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, Գիրք Ա, Եր., 1955, էջ 153:

փաստեր հնարավոր է լինում ճշտել հենց իր «Հիշատակարանի» հաղորդած տվյալների միջոցով, և դա այն դեպքում, երբ մեկից ավելի անգամ է նշվել, որ իր այդ ուղևորության մասին նա գրավոր ոչ մի հիշատակություն չի թողել:

21. 378 էջում Կոմս Էմմանուելը Մ. Իսահակյանցի երեսին է նետում հետևյալ հեզնական խոսքը. «Մի՞ գուցե պ[արոն] Իսահակյանցը... ամենայն բան գուշակում է, գործ դնելով Մեսմերի արվեստը»: Հարկ էր ծանոթագրել, որ խոսքը վերաբերում է գերմանացի բժիշկ Ֆրեդերիկ-Անտուան Մեսմերին (1734-1815), որը, Վիեննայում մասնագիտական կրթություն ստանալուց հետո, 1766 թ. հրատարակեց մեծ աղմուկ հանած «Մոլորակների կայունության մասին» իր աշխատությունը: Մեսմերն ապացուցում էր, որ տիեզերքի մոլորակները և մանավանդ արևն ու լուսինը, ուղղակիորեն ներգործում են կենդանի արարածների և առանձնապես մարդու նյարդային համակարգի վրա, առաջացնելով զանազան «մազնիսական գրգիռներ»: Այդ գրգիռները կանոնավորելու և դեկավարելու շնորհիվ, ըստ Մեսմերի, կարելի է բուժել առ այդօր անբուժելի համարվող մարդկային հիվանդությունների զգալի մասը և որ ինքը արդեն կարողանում է այդ անել: Իր գյուտը մասսայականացնելու նպատակով Մեսմերը 1778 թ. Վիեննայից փոխադրվեց Փարիզ, բացեց իր մասնավոր կլինիկան և շուտով գործնական բուժման բնագավառում մեծ հաջողության հասավ, սակայն այդ հաջողությունն էլ սկսեց կասկած հարուցել: Ֆրանսիացի նյարդաբանների հանձնաժողովը Մեսմերի տեսությունը և հատկապես բուժման նրա մեթոդները քննելուց հետո եկավ այն եզրակացության, որ վերջինս սովորական հիպնոզացնող է, և որ նրա օգնությանը դիմած հիվանդների մոտ ամենևին էլ հազվագյուտ չեն եղել անգամ մահացության դեպքերը: Մեսմերիզմը աստիճանաբար կորցրեց իր հմայքը և զանազան անձանց ձեռքին դարձավ ամեն ինչ բուժելու, ամեն հիվանդություն գուշակելու ու կանխելու մի «մեթոդ», իսկ ինքը՝ Մեսմերը, զգալով վերահաս աղետը, շտապեց թողնել Փարիզը: «Հիշատակարանի» գրվելու ժամանակ, այսինքն՝ 1850-ական թթ. այն վերջնականապես վերածվել էր պարզունակ գուշակությունների անլուրջ մի «ուսմունքի», և պատահական չէ, որ Նալբանդյանը հեզնանքով էր խոսում նրա մասին՝ այդ իմաստով էլ կիրառելով «Մեսմերի արվեստ» արտահայտությունը:

Համապատասխան վերլուծականներով սկսելով նոր՝ 1859 թվականը, Կոմս Էմմանուելը իր «Հիշատակարանի» 385-րդ էջում գրում է. «Ո՛հ, ահա երեսուն նոր տարիք անցուցել եմ ես. նոցանից մինչև քսանը նույնպես ուրախացուցեր են ինձ ինչպես այժմ շատ մարդերի. բայց այս վերջին տասն նոր տարիքը ի՛նչ բաների վկա են եղել իմ հետ միասին»: Պետք էր ծանոթագրել նախ՝ որ 1859 թ. նշելով իր երեսուն նոր տարիների անցկացրած լինելը, Նալբանդյանը «Հիշատակարանում» առաջին անգամ հավաստում է, որ ինքը իրոք 1829 թվականի ծնունդ է: Ապա. իր անցած կյանքի քսան տարիները համարելով լավագույնները, Նալբանդյանն ակնարկում է այն ժամանակահատվածը, երբ սովորում էր Եղիշե-Օգսենտ վարժապետի (1836), ապա Գաբրիել քահանա Պատկանյանի (1837-1845 թթ.) դպրոցներում, գրում էր ըմբոստ դիմումներ կառավարությանը՝ Պատկանյանին իր պաշտոնում վերականգնելու համար, և վերջապես՝ աշխատանքի անցնելով որպես թեմական առաջնորդի քարտուղար, շրջագայություններ էր կատարում Հարավային Ռուսաստանում: Այս ժամանակների մասին էր, որ Նալբանդյանը մի տարի անց գրելու էր իր «Մանկության օրեր» բանաստեղծությունը, որտեղ, կրկնելով վերևում բերված միտքը, հավաստելու էր, որ դրանք եղել են օրեր «ընդունակ միայն ուրախացնելու»: Հարկավոր էր, վերջապես, ծանոթագրել, որ 1849-1859 թթ. տաս տարին Նալբանդյանի՝ հրապարակախոս և ազգային գործիչ ձևավորվելու, գաղափարական թեժ մենամարտերի տարիներ էին և այս տեսակետից «Հիշատակարանը» տիրոջ հետ միասին իրոք որ շատ բաների են ականատես ու վկա եղել:

22. 391 էջում, խոսք է գնում Մոսկվայի հայ ուսանողների տված ներկայացման մասին և հավելվում է. «Պատմաբանական, չորս հատվածով եղերերգությունը «Արիստակես» անվանված, ձևացնում էր...»: Ծանոթագրության մեջ կարդում ենք. «Այս ողբերգությունը պատկանում է Սարգիս Վանանդեցու գրչին: Մոսկվայում բեմադրվել է Փուղիինյանի մշակությամբ» (էջ 534, ծան. № 51): «Անվանական բառարանում» էլ, «Նիկողայոս Փուղիինյան» անվան տակ նշված է. «Փուղիինյանի մշակությամբ էր, որ Մոսկվայում, առաջին անգամ բեմադրվեց Սարգիս Վանանդեցու «Արիստակես» ողբերգությունը» (էջ 551): Բանն այն է, որ զմյուռնիացի կրթական-մշակութային գործիչ, դրամատուրգ Սարգիս Վանանդեցին նման վերնագրով գործ երբեք չի գրել, և նրա

դրամատուրգիական գործերի թվում «Արիստակես» անունով ողբերգությունն չկա: Բարեբախտաբար թե՛ Նալբանդյանը, և թե՛ Մոսկվայում հրատարակվող «Ճռաքաղ» ամսագիրը, բերում են ներկայացման համեմատաբար ընդարձակ բովանդակությունը, որից հայտնի է դառնում, որ խոսքը վերաբերում է Սարգիս Վանանդեցու «Սուրբ Ներսես կամ Հայաստանի բարերար» գրաբար ողբերգությանը, որը հրատարակվել էր Փարիզում, 1858 թ.: Այս ողբերգությունն է, ահա, որը վերամշակել է Փուղինյանը, գրական լեզուն փոխել է աշխարհաբարի, փոխել է անվանումը, այսինքն՝ «Սուրբ Ներսես կամ Հայաստանի բարերարը» դարձել է «Արիստակես» և բեմադրել է Մոսկվայում, տեղի հայազգի ուսանողների ուժերով: Թե հատկապես ինչն է փոփոխել Փուղինյանը և ինչպես՝ դժվար է ասել. «Արիստակեսի» ձեռագիրը մեզ չի հասել: Բայց «Արիստակեսը» գաղափարական իմաստով եղել է թույլ բեմադրություն և այն Նալբանդյանը չի հավանել («Առհասարակ շատ թույլ մի բան և գուրկ ամենայն բանաստեղծական ճարտարութենից. ասես թե դորա հեղինակը հարկադրանքով է գրել այդ գործը» (էջ 391): Նույն էջ 391-ում, խոսվում է Նիկողայոս Փուղինյանի մասին: «Անվանական բառարանում» տրված ծանոթագրության մեջ (էջ 551) չեն նշված նրա ծննդյան ու մահվան թվականները՝ 1834 թ. Թիֆլիս – 1880 թ., անդ: Նույն այդ բացթողումը թույլ է տրված նաև Սարգիս Տիգրանյանի կապակցությամբ: Վերջինս ծնվել է Նոր-Նախիջևանում, 1813 թ. և վախճանվել է Եյսկում (Հարավային Ռուսաստան), 1875 թ., որտեղ մեկնել էր՝ կյանքի վերջին տարիները հարազատների մոտ անցկացնելու համար¹³:

Մեր արած այս մի քանի փոքրիկ դիտողությունները, որոնք նպատակ ունեն ավելի լավ տեսնել առանց այն էլ լավ կատարված աշխատանքը, կարծում ենք, կարող են օգտակար լինել «Հիշատակարանը» ծանոթագրելու ժամանակ:

Պատմա-բանասիրական հանդես, 1979, № 3, մարտ

¹³ «Արարատ», 1875, № 6, էջ 236-237: